

**ԳԱՀԻՐԵ**

**ՄՏԵՐՄԻԿ ԶՐՈՅՑ  
ԱՐՈՒԵՏԱԳԵՏ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ  
ՓՈԼ ԳԱԼԻՆԵԱՆԻ ՀԵՏ**



Պրն. Փոլ Գալինեան յուշանուէր մը կ'ստանայ Գահիրէի Ամերիկեան համալսարանի կազմակերպիչ մարմնի ներկայացուցիչէն, «Oriental hall»-ի մէջ, իր հեղինակած «Ուիլիմ Սարոյեան Մարդը, Գրողը» ֆիլմի ներկայացումէն վերջ:

Մեղի Համար պատեհութիւն մը եղաւ անձնապէս ծանօթանալու «Ուլիլմ Սարոյեան, Մարդը, Գրողը» ֆիլմի հեղինակ պրն. Փոլ Գալինեանը, որ հպանցիկ այցելութիւն տուաւ խմբագրատունս Չորեքշաբթի 19 Մայիսի երեկոյեան, որուն Հետ ունեցանք յանպատրաստից մտերմիկ զրոյց մը իր արուեստին, յատկապէս աշխարհի տարածքին իր ֆիլմի ցուցադրութիւններուն մասին, որոնց մօտէն Հետաքրքրուած էինք սկզբնաւորութենէն ու արձագանգած մեր մամուլի էջերէն եւ հարկ չեղաւ անգրադառնալու այսու տնօր կենսագրութեան, որովհետեւ արդէն ճանչցած էինք զայն Հեռուէն իր կարողութիւններուն, գտած յաշողութիւններուն եւ իր բարձր արժանիքներուն, հրատարակուած տեղեկագրութիւններու ընդմէջէն:

Բարի զալուստ մաղթելէ ետք սկսանք խօսակցել պրն. Փոլ Գալինեանի հետ, որ իր գրաւիչ արտայայտութեամբ գերեց մեր հոգին եւ մինչեւ աւարտը, որ

տեւեց մէկ ժամէ աւելի, բերնէն ծորող սահուն Հայերէն քաղցր ու Հետաքրքրական խօսքերուն կախուած մնացինք եւ մեր մէջ այն Համողումը գոյացաւ, որ ան ոչ միայն թափանցած է Սարոյեանի գրականութեան այլ նաև աշխարհահռչակ գրողին կեանքի ներքին ծալքերուն:

Կրկնութիւններէ խուսափելով հարցուցինք, թէ ի՞նչ էր պատճառը որ յետաձգուեցաւ եգիպտոս իր այցելութիւնը 1998-ին. ըսաւ որ այդ տարւոյն Մայիս 6-ին իսթանպուլահայ «Սահակեան Սանուց Միութեան» կողմէ հրաւէր ստացած էր ֆիլմը ներկայացներու «Ակոս» թերթի հովանաւորութեամբ, որուն ընդառացած էր գալով Ֆրէզնոյէն եւ այդ պատճառ եղած էր յետաձգել եգիպտոս իր այցելութիւնը: Ստացուած արդիւնքին մեր հետաքրքրութեան, ըսաւ որ իր ակնկալութիւնները չարդարացան, որովհետեւ կազմաերպչական դժուարութիւններ խոչընդոտած էին ընդհանուր հանրութեան մէջ հետաքրքրութիւն ծաւալելու: Ան յոյս յայտնեց յարմար ուրիշ առիթով մը վերստին պիտի ներկայացնէ ֆիլմը թուրք եւ հայ հասարակութեան:


Նպատակս աշխարհի ժողովուրդներուն ծանօթացնելն է Սարոյեան մէծ գրողը որ պատիւ մըն է հայ ժողովուրդին Համար: Ամերիկացիները Սարոյեանը կը պահծացնեն Համարելով զայն ամերիկացի գրող, սակայն ան ամէն բանէ աւելի հայ է, հակառակ անոր որ անգլիերէն գրած է իր գործերը. իր բոլոր գործերը հայկական կնիք ունին եւ հեղինակը յաճախ կրկնած է այդ իրականութիւնը եւ ֆիլմին մէջ



Նկարին մէջ ձախէն աջ՝ Պրն. Փոլ Գալինեան, իր տիկինը՝ Արաքսի եւ դուստրը՝ Սիւզի:

այ Հայերէն խօսած է: Սիրած եմ Սարոյեանը եւ Հետաքրքրութ անոր գրականութեամբ ու կեանքով եւ այս Փիլմի պատրաստութեան Համար ութը տարիներ Հետեւողական աշխատանք տարած եմ օժանդակութեամբ տիկնոջս՝ Արաքսիին, գուստրիս՝ Միւզիին եւ որդւոյս՝ Հէրոլտի, գործակցութեամբ երաժշտութեան յօրինող Փոլ Նազիկեանի, Սարգիս Մուրատեանի գծագրութեան եւ Մայք Քաննըրդ «Մէնիքս»ի (Գրիգոր Օհանեան) որ կը պատմէ Սարոյեանի 60 տարուց գրական վաստակը եւ ի վերջոց կարողացայ զլուխ Հանի սեփական միջոցներով այս գործը բառե ան:

(Ծար. Թ տեսնել Գ. Էջ)



Ուիլիլմ Սարոյեան  
(Լուսանկար՝ Փոլ Գալինեանի)

## ՄՏԵՐՄԻԿ ԶՐՈՅՑ

(Ծար. Բ. Էջէն)

Այսրան մեծածախս Փիլմի պատրաստութիւնը որքա՞ն արձեց ձեզի Հարցումին, ան Հաստատեց 300 Հազար տոլար, որ պատկառելի գումար մըն է: Ամէն անձ կը փափաքի ունենալ Փիլմի օրինակէն: Յայս ունիմ, որ մը Փիլմը տեսաերիզի վերածուի վաճառուելու Համար ժողովուրդին: ABC, NBC եւ MIRAMAX ընկերութիւնները առաջարկեցին գնել ինձմէ Փիլմը ու ես պահանջեցի անոնցմէ մէկական օրինակ յատկացնել Հայկական բոլոր միութիւններուն, գրագարաններուն եւ գպրոցներուն, բայց մինչեւ օրս պատասխան չստացայ անոնցմէ: Ո՞վ պիտի դնէ Փիլմը: Այս Հարցը զիս շատ կը զրազեցնէ: Պէտք է շատ դրոյշ ըլլամ: Եւուզեմ վստահելի անձերու յանձնել պատասխանաւուաւ թիւ և նը գուցէ միութիւններու, զոտ

անձերու, որոնց մօտէն կը ձաւնչնամ, որպէսզի Փիլմը իր նպատակին ծառայէ: Ամանք կ'ըսեն ինձի, ծախէ՛, զրամզ առ իւ քէյֆդ նայէ: զնողը ինչ կ'ուզէ թող այդ ընէ: Թիրեւս այդպէս ընէի, եթէ զրամ շահելու Համար պատրաստած ըլլայի այս Փիլմը: Բայց ո՞չ իմ մօտեցումս անշահանդրական է, ընտանեկան ոգի ունի, Հոս է յաջողութեանս գաղտնիքը եւ այդ իսկ պատճառով առուծախի չեմ գներ զայն: Հիմնական նպատակ վաւերագրական այս Փիլմով Ուիլլիլմ Սարոյեանը անմահացնելն է, ծանօթացնել աշխարհին, մանաւանդ մեր ներկայ եւ ապագայ սերունդներուն անոր զործերը, որպէսզի կարենան ուսումնասիրել, Հայրատանալ, ինչպէս նաև ստեղծուի եղբայրութեան ու Հասկացողական ոգին բոլոր ազգերու մէջ:

(Ծար. 1)